չոց իւրոց ուստի Յա-կովբ որդին ըն-
կալաւ զօրհնութիւն անդ-րան-կու-թեան,
եւ յերկիւղէ երէց եղբօրըն իւրոյ Յս-
ուայ՝ գընաց առ քերուին իւր Լաբան, եւ
ամուսնացաւ ընդ Հընաքելայ, եւ Լի-
այ դըստերաց նորա, եւ ծընաւ զերկո-
տասան որդիս, յորոց ծագեցան երկո-
տասան ցեղք Իսրայելի:

12. Լիւսիաս էր հեթա՛նոս մեծ իշ-
խան Անտիոքոս թագաւորին՝ որ երբ լու-
աթէ Յուդայ Մակաբէ քաջութեամբ
հալածէր ՚ի Հըրէ-աստանէ ըզ-Հեթա-
նոսըս արձակեաց ըզ-Լիւսիաս զօրօք
բազմօք կործանել ըզ-Հըրէ-աստան: Հը-
րէ-այքըն երբ տեսին զա-հեղ զօրու-
թիւնըս նորա սոսկալով ծով պահե-
ցին եւ եղեալ առաջի իւրեանց ըզ-
գիւրըս օրինաց եւ զըսգեստըս քահայ-
կանըս՝ լացին եւ աղաղակեցին առ Աստ-
ուած զի օգնական լիցի նոցա, ուստի-
Յուդայ Մակաբէ այնքան զօրացաւ, զի
հալածեալ զամենեւին, եմուտ յԵ-
րուսաղէմ բաղում աւարովք օրհնե-
լով զԱստուած:

13. Խեւա-ցիք էին ՚ի Քանա՛նայի-ւոց
յազգէ ՚ի կողմանըս Երուսաղէմի իբ-

բեւ Իս-րայ-լե-լա-ցիք ե-լեալ յԵ-զիպ-տո-սէ
 գը-նա-ցին ՚ի կար-միր ծով եւ մեր-ձե-ցան
 երկ-րին ա-ւե-տեաց առ-աջ-նոր-դու-թեամբ
 մար-գա-րէ-ին Մով-սէ-սի , Խե-լա-ցիք ու-
 նե-լով ին-քեանց թա-գա-ւոր , մի-ա-ցեալ
 ընդ այ-լոց աղ-գաց ե-լին ընդ-դէմ Իս-րա-
 յէ-լա-ցաց , բայց Յե-սու որ-դի Նա-ւեայ
 առ-աջ-նորդ լեալ զօ-րուն կո-տո-րեաց ըզ-
 հա-մայն աղ-գըս հան-դերձ թա-գա-ւո-րօք
 նո-ցա եւ ժա-ռան-դե-ցոյց Իս-րա-յե-լի զեր-
 կիր նո-ցին :

14. Ծը-նօտ կո-չի տե-ղին որ է ՚ի մէջ
 Յու-դայ , ուր ըս-պան Սամի-սոն ըզ-հա-
 շար այ-լաղ-գիս ծը-նօ-տիւ ի-շոյ , վա-սըն
 զի Սամի-սոն ՚ի սա-կըս վը-րէժ-իս ընդ-բու-
 թեան յայ-լաղ-գաց այ-րեաց զան-դաս-տա-
 նըս նո-ցին նո-քա եւս առ-ա-քե-ցին զո-մա-
 նըս ՚ի Յու-դայ կա-պեւ ըզ-Սամի-սոն , որ
 ինք-նին կա-պեալ ետ զին-քըն՝ երբ ըն-թա-
 ցան ընդ-դէմ նո-րա այ-լաղ-գի-քըն , զօ-րու-
 թեամբ Աս-տու-ծոյ խոր-տա-կեաց Սամի-սոն
 ըզ-կա-պա-նըս , եւ գը-տեալ ըզ-ծը-նօտ ի-շոյ ,
 ըս-պան զայ-լաղ-գիս , բայց յե-տոյ ծա-րա-ւե-
 ցաւ յոյժ եւ աղա-ղա-կեաց առ Աստ-ուած ,
 եւ եւ ջուր ՚ի ծը-նօ-տէն զոր է-արբ եւ զո-

վա-ցաւ , վա-սըն այ-նո-րիկ կո-չե-ցաւ տե-
ղին այն ծը-նօտ :

15. Կորն էր որ-դին Սա-Տա-ռայ , որ մի-
ա-բա-նեալ ընդ Ռա-դա-նայ եւ Ա-բի-րո-
նի հան-դերձ եր-կու հա-րիւր գըլ-խա-ւո-
րօք ա-պըս-տամ-բե-ցան ՚ի Մով-սի-սէ եւ
յԱ-հա-րո-նէ ՚ի մէջ ա-նա-պա-տին , տըր-
տըն-ջե-լով թէ ըն-դէ՞ր մի-այն դուք մեր-
ձե-նայք ՚ի խո-րա-նըն , վա-սըն ո-րոյ շի-նե-
ցին ին-քեանց ըզ-բուր-վառ գը-նա-ցին եր-
կու հա-րիւր եւ յի-սուն հո-գիք առ դու-ռըն
խո-րա-նին վը-կա-յու-թեան : Ա-հա-րոն եւ
ա-ռեալ ըզ-բուր-վառ գը-նաց ան-դըր բայց
երբ բա-ժա-նե-ցան ժո-ղո-վուրդ-քըն ՚ի մի-
մեանց յան-կարծ պա-տա-ռե-ցաւ եր-կիր եւ
ե-կուլ ըզ-Կորն ըզ-Ռա-դան եւ ըզ-ժո-ղո-
վուր-դըն նո-ցա :

16. Հա-բէլ էր կըրտ-սեր որ-դի Ա-դա-
մայ որ բա-րե-պաշ-տու-թեամբ զո-հըս ոչ
խա-րաց մա-տու-ցա-նէր Տեա-ռըն եւ ըն-դու-
նէ-լի լի-նէր զոհ նո-րին , իսկ Աա-յին ե-րեց
եղ-բայ-ըն էր երկ-րա-գործ որ ոչ մա-տու-
ցա-նէր ըզ-պա-տա-րագ ՚ի լաւ պըտ-ղոց
վա-սըն այ-նո-րիկ ան-ըն-դու-նակ ե-ղեւ պա-
տա-րագ նո-րին ուս-տի ՚ի չար նա-խանձ-

ւէ՛ գըր-դը-ւեալ ե-հան զէդ-բայ-ըն իւր
 ՚ի դաշտ, եւ ըս-պան ըզ-նա, եւ ա-նի-ճե-
 ցաւ յԱստու-ծոյ, որ ե-րե-րեալ եւ տա-տա-
 նեալ ե-ղեւ, մինչ Ղա-մէք մի ՚ի Թո-ռա-ցըն
 նո-րին տե-սեալ ըզ-նա ՚ի մէջ ան-տա-
 ոին եւ կար-ճե-լով ըզ-նա կեն-դա-նի ինչ,
 ըս-պան :

17. Չոր Յով-սա-փա-տու նը-շա-նա-կէ՛ ձոր
 դա-տաս-տա-նի, որ-պէս կո-չեաց Յո-վէլ
 մար-դա-րէն, եւ է ՚ի մէջ լե-րան Ե-րու սա-
 ղէ-մի, եւ ձի-Թե-նեաց, ուս-տի ան-ցա-նի
 հե-ղե-ղա-տըն Վեդ-րո-նի, զի մար-դա-րէ-
 քըն գու-շա-կե-ցին Թէ անդ պնրտ էր
 Քը-րիս-տո-սի առ-նեւ ըզ-վեր-ջին դա-տաս-
 տան իւր, որ-պէս ա-սէր Յո-վէլ, Թէ յայ-
 նըմ ժա-մու ժո-ղո-վե-ցից զայ-լազ-դիս ա-մե-
 նայն, եւ ի-ջից ՚ի ձո-րըս Յով-սա-փա-տու,
 եւ անդ դա-տե-ցից ըզ-նո-սա :

18. Ղովտ էր եդ-բօր-որ-դի Աբ-րա-հա-
 մու, որ բը-նա-կէր ՚ի Սո-դոմ ՚ի կող-մա-
 նըս Յոր-դա-նա-նու, բայց ա-նօ-րէն Սո-
 դո-մա-ցիք մե-ղըս առ-նե-ին սո-դով-մէ-ա-
 կան, ոյր սա-կըս ա-ռա-քեաց Աստ-ուած
 հը-րեշ-տա-կըս, որք եր-Թեալ զեր-ճուս-
 ցենն ան-տի զե-րա-նե-լին ըզ-Ղովտ : Յոր-
 ժամ հա-նեալ ըզ-Ղովտ հա-սու-ցին ՚ի

Սե-դո-վըր հան-դերձ եր-կու դըս-տե-րովք,
 յայն-ժամ էջ հուր յերկ-նից, եւ այ-րեաց ըզ-
 Սո-դոմ եւ ըզ-Քո-մոր ա-մե-նայն բը-նակ-
 չօք իւ-րեանց, իսկ կի-նըն Ղով-տայ դար-
 ձաւ յար-ձան ա-ղի:

19. Ճան-ճիկ էր կուռք Ակ-կա-րո-նի, որ
 ան-ուա-նէր Բէ-եղ-ղե-բուղ, այ-սին-քըն տէր
 Ճան-ճից, զի կը-ուա-պաշտ-քըն հա-ւա-տա-
 վին թէ ա-ղա-տել ու-նի ըզ-նո-սա ՚ի Ճան-
 ճից, ուս-տի շի-նեալ ըզ-պատ-կեր մի ճան-
 ճի պաշ-տէ-ին, Իս-րա-յե-լա-ցի-քըն եւս
 պաշ-տէ-ին եր-բե-մըն ըզ-կու-ռըս զայս, ուս-
 տի յոր-ժամ Ռ-քո-ղի-այ ար-քայ ՚ի վայր
 ան-կաւ ՚ի վեր-նա-տա-նէն, ա-ուա-բեաց
 ըզ-պատ-գա-մա-ւո-րըս առ ճան-ճիկ կուռ-
 սըն հար-ցա-նել թէ ապ-րե-լոց է թէ ոչ,
 ո-րոց Ե-ղի-ա մար-գա-րէն կը-տամ-բեաց
 թէ թո-ղեալ զԱստ-ուած կեն-դա-նի եր-
 թայ առ ճան-ճիկ աստ-ուած-ըն Ակ-կա-
 րո-նի^ր ա-սեմ, մեռ-ցի ար-քայ:

20. Մով-սէս նը-շա-նա-կէ ծը-նունդ ջը-
 րոյ, զի ՚ի ժա-մա-նա-կի ծը-նըն-դեան սո-
 րա, հը-րա-ման տու-եալ էր Փա-րա-ւօ-նի
 ըս-պա-նա-նել զա-մե-նայն ա-րու զա-ւա-կըս
 Իս-րա-յե-լաց-ւոց ըզ-կը-նի ծը-նըն-դեան
 իւ-րեանց, տե-սա-նե-լով նո-ցա ըզ-Մով-

սէս կայ-տառ յոյժ, չը-կա-րէ-ինն պա-հել
 ա-ւե-լի, վա-սըն ո-րոյ ե-ղինն ըզ-նա ՚ի մէջ
 տա-պա-նա-կինն ծե-փե-ցինն ձիւ-թով, եւ ըն-
 կե-ցինն զայն ՚ի գետ մի, ուր գը-նայր
 Դուս-տըր Փա-րա-ւօ-նի լու-ա-նալ, եւ տե-
 սեալ ըզ-տա-պա-նա-կըն, առ զայն եւ տա-
 րաւ ընդ իւր իբ-րեւ որ-դե-գիր, եւ ու-
 սոյց նը-մա զա-մե-նայն գի-տու-թիւ-նըս,
 իսկ Մով-սէս գը-նաց ՚ի լեա-ռըն Քո-րէք,
 ուր ե-րե-ւե-ցաւ նը-մա հը-րեշ-տակ
 Տեա-ռըն հը-րով ՚ի մի-ջոյ մո-րեն-ւոյն եւ
 հը-րա-մա-յեաց գը-նալ յԵ-զիպ-տոս եւ մե-
 ծա-մեծ հը-րա-շիւք զեր-ծու-ցա-նել ըզ-ժո-
 ղո-վուր-դըն ՚ի ձե-ռաց Ե-զիպ-տաց-ւոց :
 Ո-րոյ կա-տա-րեալ զա-մե-նայն ան-ցոյց
 զԻս-րա-յէլ ընդ ծո-վըն կար-միր, եւ ՚ի լեա-
 ռըն Սի-նա-յի եւ ըն-կա-լաւ ըզ-տա-սըն
 պատ-ուի-րա-նըս եւ զօ-րէ-նըս, եւ ետ
 ժո-ղո-վըր-դեան, ՚ի մեր-ձի-լըն նո-րա, երկ-
 րին ա-ւե-տեաց՝ մե-ռաւ նա ՚ի լեա-ռըն
 Նա-բաւ, եւ ան-յայտ ե-ղել գե-րեզ-ման
 նո-րին, զի մի՛ պաշ-տի-ցենն ըզ-նա :

21. Յե-սու ա-շա-կերտ Մով-սի-սի լը-ցաւ
 Աստ-ուա-ծա-յին շը-նոր-հօք եւ ի-մաս-տու-
 թեամբ, եւ ե-ղել յա-ջորդ Մով-սի-սի •
 ան-ցոյց ըզ-ժո-ղո-վուր-դըն ընդ գե-տըն

Յոր-դա՛նան, եւ տա՛րաւ յեր-կիւրըն աւեւ
տեաց, եւ մե՛ծաւմեծ քաջու-թեամբ կոր-
ծա՛նեաց ըզ-կընաւպաշտըս եւ վի՛ճաւկաւ
ժա՛նանգեցոյց զեր-կիւրըն տա՛սըն եւ եր-
կու ցե՛ղիցըն: Ար բե՛րեալ թաղեցին
զոսկե՛րըս Յովսեփայ զեղեց-կին, յետ
այսո՛րիկ մե՛ռաւ Յե՛սու հովուե՛լով ըզ-
ժողո՛ւլուրդըն յերկո՛տասան ամ:

22, Նինուէ՛ւացիք բը՛նտկէ՛ին ՚ի ձա-
խաւկաղմըն զե՛տոյն Տիգրիսի, այն՛չափ
մեծ եւ փա՛ռաւոր քաղաք էր Նինուէ՛ւ, զի
հա՛ղիւ հը՛նար էր մարդոյ ՚ի մէջ երից ա-
ւուրց զը՛նալ ՚ի մի դը՛րա՛նէ առ միւս
դուռըն քաղաքին, յըղեաց Տէր ըզ-
մարգա՛րէն Յովնան քա՛րոզել Նինուէ՛ւ-
ացւոց, մարգա՛րէն երկեաւ եւ ելնաւու ՚ի
Թարձիշ, բայց սաստիկ ալէ՛կոծու՛թեան
հանգիստե՛լով ընկեցին ըզնա ՚ի ծով, եւ
զա՛ղա՛րեցաւ մըրըրիկըն: Եկուլ ըզնա
կէ՛նըն, եւ եթուք ըզնա արտա՛քըս յետ
երից աւուրց, ապա զը՛նացեալ նո՛րա
անդըր, քա՛րոզեաց Նինուէ՛ւացւոց զա-
պաշխարու՛թիւն, եւ դարձոյց ըզնո՛սա
առ Աստուած: X

23, Համու՛նի էր կին բա՛րեպաշտ հը՛-
րէ՛այ աղգաւ որ ՚ի ժա՛մա՛նաւկըս Մա՛-

կա-բա-յեց-ւոց Տան-դերձ եօ-թ լն որդ-
 ւովք կա-տա-րե-ցաւ : Նախ՝ զար-հու-րե-լի
 տան-ջա-նօք նա-հա-տա-կե-ցին զոր-դի-սըն
 մի ըզ-կը-նի միւ-սոյ ա-ռա-ջի ա-չաց իւ-
 ըոց , իսկ քա-ջա-սիրտ կի-նըս այս կա-
 ցեալ յոր-դո-րէր եւ քա-ջա-լե-րէր զոր-
 դիս իւր քա-ջու-թեամբ նա-հա-տա-կիւ ,
 համ-բե-րել չար-չա-րա-նաց եւ ոչ ու-րա-նալ
 զԱստ-ուած , մինչ զի ա-նի-րա-ւըն Ան-տի-
 ս-քոս սըրտ-մը-տեալ ՚ի վե-րայ նո-րա՝ ըզ-
 նա ան-դէն ընդ որդ-ւո-ցըն նա-հա-տա-կել
 հը-րա-մա-յեաց :

24. Ո-ղի-ա որ-դի Ա-մա-սի-այ թա-գա-
 ւո-րին յԵ-րու-սա-ղէմ , ա-րար բա-րիս եւ
 ըզ-քա-ջու-թիւ-նըս ա-ռա-ջի Տեա-ռըն , եւ
 ամ-րա-ցու-ցեալ ըզ-պա-րիս-պըս՝ տի-րեաց Ե-
 դիպ-տո-սի , բայց մե-ծու-թիւ-նըս այս հա-
 մար-ձա-կե-ցոյց ըզ-սիրտ նո-րա մին-չեւ
 վըս-տա-հա-ցաւ բու-րել իուն-կըս ՚ի մէջ
 տա-ճա-րին զօ-րէն քա-հա-նա-յից , ութ-
 տուն քա-հա-նայք յե-տոյ մը-տեալ հը-րա-
 մա-յե-ցին ար-տա-քըս գը-նալ , իսկ նո-րա
 բար-կա-ցեալ ընդ այս բո-րո-տե-ցաւ , որ
 ե-ղեւ պա-տիժ մե-ղաց իւ-րոց , գը-նաց , եւ
 նըս-աաւ ՚ի տան , եւ թա-գա-ւո-րեաց
 Յով-նա-թան որ-դի նո-րա ընդ նո-րա :

25. Չափըն Հարման Ամաղե-կա-ցի իշխան Արտաշէս թագաւորին նախանձեալ ընդ Մուրթ-քեայ ազգաւ Հըրթէ-ի, հօրեղբօրորդւոյ թագուհւոյն Եսթերայ, ջանայր կախել ընդ եւ կործանել ընդ համայն Հըրթէ-աստան, իսկ Եսթերայ լուեալ զայս ամենայն ՚ի միասին ընդ Մուրթ-քէ-ի աղաղակեաց առ Աստուած պահօք եւ աղօթիւք, եւ յետոյ անկեալ յոտըս թագաւորին խընդրեաց ընդ թողու-թիւն, առ որ զիջեալ նորա հըրաւմայեաց Համանայ, նըստուցանել ընդ Մուրթ-քէ ՚ի վերայ պալատ-կապ երիւվարի եւ շրջեցուցանել փառաւորութեամբ վասըն հաւատարմութեան իւրոյ, եւ յետոյ հըրաւմայեաց արքայն կախել ընդ Համան ընդ փայտէն զոր պատրաստեալ էր նա վասըն Մուրթ-քէ-ի:

26. Աիղատոս էր ազգաւ Հըրոս-մայեցի, բընիկ Պոնտոսի կըղղոյն յատուիւ, որ ՚ի ժամանակըս Տիբերեայ կայսեր էր գատաւոր Հըրոս-մայեցւոյ յերուսաղէմ: Յորժամ Հըրթէայք ածին ընդ Քըրիստոս առաջի Աիղատոսի, իմացաւ նա զանմեղութիւն փրկչին,

բայց առ հաճեալոյ Հըրբէ-ից դատա-
պարտեաց ըզնա ՚ի խաչ ելանել: Երբ
հըռ-չտ-կե-ցաւ այս մեծ անխորատ-լու-թիւն
նորա, արտաքսեցին ըզնա յիշխանու-
թեանէ, եւ յետըս կոչեցին ՚ի Հըրբովմ.
Խի Աիշատոս յերկիւղէն անկաւ ՚ի
ծով եւ մեռաւ:

27. Չուր Մօռանայ է լիճ առ ծո-
վա-կին Գալի-լի-աց-ւոց, ընդ մէջ նորա
անցանէ գետըն Յորդանան, յորժամ
եհաս Յեսու պատերազմաւ յԵրուսա-
ղէմ, հինգ թագաւորսն կըռապաշ-
տից ըբբոնեալ, հըրաման ետ զօրաց
իւրոց կոխել ըզպարանոցըս նոցին ո-
տիւք, մինչեւ մեռան, իսկ մընացեալ
թագաւորքն լուեալ զայս՝ միաբանե-
ցան, եւ եկին անթիւ զօրօք պատերազ-
միլ առ լըճաւըն, բայց Յեսու Աստուա-
ծային զօրու-թեամբ յաղթեաց զանե-
նեսին, եւ ըսպան ըզթագաւորսն
նոցին:

28. Ռոբոլամ էր որդի իմաստնոյն
Սողոմոնի որ յետ թագաւորելոյ զա-
մըս քառասուն, ՚ի քառասուն եւ ՚ի մի
ամին ետ զաթոռ թագաւորու-թեանըն
որդւոյ իւրովմ, բայց զի անհանձար ոք

էր սա՛ ՚ի ժո-ղո-վել Խշ-խա-նաց եւ ՚ի
 խընդ-րել զի Թե-Թե-ւա-ցուս-ցէ ըղ-ծա-
 նըր Տար-կա-նըս, խոր-հե-ցաւ նա ընդ ծեր-
 սըն, որք խոր-հուրդ ե-տուն կա-տա-
 րել ըղ-կա-մըս ժո-ղո-վըր-դեան, իսկ նա
 խոր-հե-ցաւ ընդ մանկ-տիա եւ խը-րա-տու
 նո-ցին խըս-տու-Թեամբ ար-ձա-կեաց ըղ-
 ժո-ղո-վուր-դըն, որք զըղ-ուեալ ընդ Ռո-
 բո-վա-մայ ե-դին Թա-գա-ւոր իւ-րեանց
 Յե-րո-բո-վամ ծա-ռայն Սո-ղո-մո-նի, եւ
 Ռո-բո-վամ մի-այն Թա-գա-ւո-րեաց ՚ի վե-
 րայ Յու-դայ :

29. Սա-ւուղ էր ա-ռա-ջին Թա-գա-ւոր
 Իս-րայել-ի, իբ-րեւ ծե-րա-ցաւ մար-դա-
 րէն Սա-մու-էլ, ժո-ղո-վուրդ-քըն խընդ-րե-
 ցին իւ-րեանց Թա-գա-ւոր, եւ նա օժ ըղ-
 Սա-ւուղ Աի-սեան որ մը-տեալ ՚ի պա-րս
 մար-դա-րէ-ից, մար-դա-րէ-ա-ցաւ ՚ի մէջ նո-
 ցա, եւ զօ-րա-ցաւ քա-ջու-Թեամբ, նոյն-պէս
 էր որ-դին իւր Յով-նա-Թան : Սա-կայն
 Ա-մա-ղէ-կա-ցիք ՚ի ժա-մա-նա-կըս մար-
 տի ան-հը-նա-զանդ ե-ղեն Սա-ւու-ղայ վա-
 սըն ըս-պա-նա-նե-լոյ ըղ-Թա-գա-ւոր իւ-
 րեանց, եւ ՚ի պա-տե-րաղ-մի-լըն ընդ նո-սա
 մե-ռաւ Սա-ւուղ եւ որ-դի իւր Յով-նա-Թան
 ո-րոց յա-ջոր-դեաց մար-դա-րէն Դա-ւիթ :

30. Ատ-բա-բոյլթ կո-չե-ցին զա-նուն որդ-
 ւոյն Փե-նե-սէ-Տի յոր-ժամ ծը-նաւ : Հե-
 ղի հաւ նո-րին ծեր գո-լով հա-տա-կաւ մը-
 նաց ՚ի տան եւ որ-դիք նո-րին ա-ռեալ
 ըզ-տա-պա-նա-կըն յար-ձա-կե-ցան ՚ի վե-րայ
 այ-լաղ-գեաց , պար-տե-ցան Իս-րա-յե-լա-ցիք
 եւ ան-կաւ տա-պա-նա-կըն Տեա-ռըն ՚ի ձե-
 ուք թըշ-նա-մեաց , եւ որ-դի-քըն Հե-ղեայ
 մե-ռան , իբ-րեւ լու-աւ զայս Հե-ղի ան-կաւ
 յա-թո-ոոյ իւ-րոյ եւ մե-ռաւ , զոր ՚ի լը-սե-լըն
 Նո-ւոյ նո-րին կը-նոջ Փե-նե-սէ-Տի որդ-ւոյ
 նո-րա ծը-նաւ զոր-դին եւ կո-չե-ցին Ա այ-բա-
 բոյլթ , այ-սին-քըն վայ բար-ձան փառ-ք Իս-
 րա-յե-լի : Իսկ այ-լաղ-գիք ե-դին ըզ-տա-պա-
 նա-կըն ՚ի տան Գա-գո-նայ կը-նոյ իւ-րեանց ,
 եւ կոր-ծա-նե-ցան կուռ-քըն , ին-քեանք եւս
 պա-տու-հա-սե-ցան մին-չեւ փո-խե-ցին ըզ-
 տա-պա-նակ Տեա-ռըն ՚ի տե-ղի իւր : X

31. Տօ-բիթ էր բա-րե-գործ իշ-խանս ո-մըն
 Հը-րէ-այ , որ գե-րի վա-րե-ցաւ ՚ի Նին-ուէ
 եւ բաշ-խէր ո-ղոր-մու-թիւն գե-րեաց աղ-
 զին իւ-րոյ : Ա-ռա-բեաց զոր-դին իւր
 Տօ-բի-ա յեր-կի-րըն Մա-րաց բե-րեւ զըս-
 տաց-ուա-ծըս զոր պա-հեալ էր առ Գա-
 բար-յե-լի : Յոր-ժամ ե-լա-նէր Հը-ռա-
 փա-յէլ հը-րեշ-տա-կըն ընդ իւր ուղ-ղե-կից

ե-ղեւ, իբ-րեւ հա-սինն ՚ի գե-տըն Տիգ-րիս
 ե-մուտ Տու-բի-ա ՚ի գե-տըն եւ վա-ղեաց,
 ձու-կըն մի ար-տա-քըս, զոր պատ-ուի-
 րեաց նը-մա հը-րեշ-տա-կըն կալ-նուլ եւ
 պա-հել ըզ-լեարդ եւ ըզ-լե-ղին՝ եւ ըզ-
 ձուկն խո-րո-վե-ցին եւ կե-րան, եւ գը-նա-
 ցին ՚ի տուն Հը-ռա-գե-լի, ո-րոյ գուստ-ընն
 էր այ-սա-հա-րեալ, ընդ որ ով քա-մուս-
 նա-նայր, մե-ռա-նէր: Ի մը-տա-նե-լըն նո-ցա
 ՚ի սե-նեակ իւ-րեանց ծը-խեաց Տու-բի-ա
 խունկ ՚ի հուր, եւ եդ ՚ի վե-րայ նո-րա ըզ
 սիրտ եւ ըզ-լեարդ ձը-կան, ո-րով փա-խեալ,
 դե-ւըն եւ դար-ձեալ ՚ի տուն հօր իւ-րոյ
 լու-սա-ւո-րեաց ըզ-նա, ա-պա ա-նե-րե-ւոյթ
 ե-ղեւ ՚ի մի-ջոյ հը-րեշ-տա-կըն:

32. Բո-կոմ էր թա-գա-ւոր Մա-դի-ա-մու,
 որ մի-ա-բա-նեալ ընդ այ-լոց թա-գա-ւո-
 րաց եւ պա-տեր-աղ-միլ ընդ Խա-րա-յե-լի
 բայց Խա-րա-յե-լա-ցիք ըս-պա-նին զա-մե-
 նե-սին, կոր-ծա-նե-ցին ըզ-բա-ղա-քըս նո-
 ցին, սա-տա-կե-ցին ըզ-կա-խար-դըն Բա-
 զա-ամ, որ ե-կեալ էր ա-նի-ծա-նեւ զԽա-րա
 յէւ: Այլ հը-րեշ-տակ Տեա-ւըն հան-դի-
 պեալ Բա-ղա-ա-մու ՚ի ճա-նա-պար-հին չե-
 թող ի-շոյն յա-ռա-ջա-նալ, իսկ Բա-ղա-ամ
 գա-նէր զէշ իւր: Բա-ցաւ բե-րան ի-շոյն

եւ ըս-կը-սաւ նա-խա-տել ըզ-Բա-ղա-ամ վա-
սըն չա-րու-թեան-ցըն , ուս-տի Բա-ղա-ամ
փո-խա-նակ ա-նի-ծե-լոյ օրհ-նեաց զԻս-րայէլ :

33. Յա-ւա-լի էր Շու-շան կինն իշ-խա-նին
Յո-վա-կի-մայ . եւ էր սա գե-ղե-ցիկ յոյժ ,
ընդ գեղ սո-րին ապ-շեալ եր-կու չար Հը-
րէ-այ դա-տա-ւո-րաց ցան-կա-ցանն ու-նիլ
ըզ-նա , բայց պար-կեշտ կի-նըն ան-հա-
ւան գը-տաւ նո-ցին , ոյր սա-կըս վը-կա-յե-
ցին ըզ-նը-մա-նէ վը-կա-յու-թիւն սուտ , թէ
տե-սին ըզ-նա գոր-ծել զան-պատ-շաճ գոր-
ծըս եւ դա-տա-պար-տե-ցին ըզ-նա ՚ի մահ :
Յոր-ժամ տա-նէ-ին ըզ-նա կո-րու-սա-նել ,
մա-նու-կըն Բա-նի-էլ մար-դա-րէ-ա-ցեալ աստ-
ուա-ծա-յին հոգ-ւով՝ ա-ղա-ղա-կեաց ՚ի ձայն
բար-ձրը եւ ա-սէ , ան-պարտ եմ ես յա-րե-
նէ գո-րա եւ դար-ձոյց ըզ-ժո-ղո-վուր-դըս ,
դա-տա-պար-տեաց ըզ-ծեր-սըն վա-սըն ա-նի-
բաւ դա-տաս-տա-նաց նո-ցին , եւ ըզ-Շու-
շան ապ-րե-ցոյց :

34. Իւ-րի կամ Ու-րի էր հայր ճար-տա-
բա-պե-տին Բէ-սի-լի-է-լին , որ լը-ցեալ ի-մաս-
տու-թեամբ-ըն Աս-տու-ծոյ շի-նեաց ըզ-տա-
պա-նա-կըն ուխ-տի , եւ պա-տեաց ըզ-նա ոսկ-
ւով եւ ա-րար եր-կուս Քը-րով-բէս ուր ի-
ջա-նիւր փառ-քըն Աս-տու-ծոյ : Շի-նեաց սա

եւ ըզխո-րա-նըն վը-կա-յու-թեան եւ զար-
դա-րեաց աշ-տա-րա-կաւ եւ ըզ-սե-ղան մի
խըն-կոց , ուր բու-րէ-ին խուն-կըս քա-Տա-
նայ-քըն , շի-նեաց սա եւ ըզ-սե-ղան զո-Տի-
ցըն Տը-րա-մա-նաւ Մով-սի-սի : Աւր յոր-ժամ
մը-տա-նէր Ա-Տա-րոն բուր-վա-ռաւ եւ ըզ-
գես-տիւք ի-ջա-նիւր լոյս յերկ-նից , եւ պա-
Տէ-ին ան-դըր ըզ-տախ-տա-կըս տա-սըն պատ-
ուի-րա-նա-ցըն , ըզ-սա-փո-րըն ոս-կի լի մա-
նա-նա-յիւ եւ ըզ-դա-ւա-ղա-նըն Ա-Տա-րո-նի :

35. Փը-սոմփ-թոմ-փա-նէ եդ փա-րա-ւօն
ա-նուն Յով-սե-փայ գե-ղեց-կի , որ նը-շա-
նա-կէ փըր-կիչ աշ-խար-Տի , քան-ղի Յով-սէփ
մեկ-նե-լով զե-րազ ար-քա-յին ե-ղեւ մեծ
իշ-խան Ե-գիպ-տո-սի , եւ զեօ-թըն ամ ա-ռա-
տու-թեան ժո-ղո-վեաց ըզ-ցո-րեա-նըս : Եւ
յոր-ժամ եօ-թըն ամ սով ե-ղեւ նոյն ցո-
րե-նով պաՏ-պա-նեաց ըզ-ժո-ղո-վուր-դըս ,
մին-չեւ նա-Տա-պե-տըն Յա-կոբ լու-եալ զայս
ա-ռա-քեաց զոր-դիս իւր ան-դըր բե-րեւ ին-
քեան ցո-րեան : Յով-սէփ ըս-տա-ցեալ զար-
ժա-թըս նո-ցին պա-Տեաց առ իւր ՚ի ծա-
ծուկ , եւ երկ-րորդ ան-դամ , յոր-ժամ ե-կին
դը-նեւ ցո-րեան , յայտ-նեաց զան-ձըն իւր
եղ-բարց , եւ ա-պա ե-բեր ըզ-Տայր իւր
Յա-կոբ ան-դըր :

35. Քաղաքին էր իշխանն Բե-տիղ-ուայ, քաղաքին Հը-րէ-ից, յոր-ժամ Հո-ղե-փեռ-նէս պաշտարեաց ըզ-քաղաքըն եւ մերձ էր տի-րեւ, Յու-դիթ՝ այ-րի կինն մի մեծա-տունն ՚ի մի-ջի նոցին զարդա-րեալ ՚ի ըզ-գես-տըս գեղեցի-կըս, եւ կոչեալ զիշխան-սըն՝ խըրա-տեաց ըզ-նոսա չեր-կըն-չիլ, այլ աղօթ-ըս առ-նել վասըն փըր-կու-թեան: Եւ ինքըն եւ գընաց առ Հո-ղե-փեռ-նէս, ո-րոյ տե-սեալ ըզ-Յու-դիթ՝ յի-մա-րեցաւ ընդ գեղ նո-րա, եւ արբ գի-նի սաստիկ յոյժ: Իսկ Յու-դիթ աղօթ-ըս մա-տոյց Տեա-ռըն եւ խընդ-րեաց զօգ-նու-թիւնն ՚ի նը-մա-նէ, ապա ա-ռեալ ըզ-սու-րըն Հո-ղե-փեռ-նեայ ՚ի մէջ գի-շերի ըս-պան ըզ-նա ինք-նին, եւ եւ գընաց ՚ի բա-նա-կէ ան-տի ՚ի քաղաքըն: Յոր-ժամ տե-սինն ա-մե-նե-քեան՝ փա-ռըս ե-տունն Աս-տու-ծոյ եւ կոր-ծա-նեալ ա-ւե-րե-ցին ըզ-բա-նա-կըն Հո-ղե-փեռ-նեայ:

36. Եւ այն նը-շա-նա-կէ կեանք, զի ա-ռանց ծը-նո-ղաց ՚ի կո-ղէն Ա-դա-մայ ըս-տեղ-ծաւ եւ ե-ղեւ օգ-նա-կան նը-մա, որք զարդա-րեալ կա-յին ՚ի մէջ դը-րախ-տինն ա-մե-նոյն բա-րեաւ: Ընդ այս բա-րիս նա-խան-նեալ գի-ւին պաա-րեաց զԵւայ ՚ի կեր-պա-

բանս օձի , եւ կե-րին նո՞քա ըզ-պը-տուղ
ար-գե-լեալ ծա-ռոյն , զըր-կե-ցան յեր-ջան-
կու-թե-նէն , մեր-կա-ցան ՚ի լու-սոյ փա-ռաց ,
եւ զա-մօ-թի հա-րան : Ա-նէ՛ծ ըզ-նո-սա Աստ-
ուած վա-սըն յան-ցա-նաց , եւ ար-տաք-սեաց
՚ի Գը-րախ-տէն փափ-կու-թեան :

37. Օս-տեր էր զա-ւառ ե-րա-նե-լոյն Յով-
բայ , որ մեծ իշ-խան գո-լով՝ ու-նէր զան-չափ
հա-րըս-տու-թիւ-նըս : Սա-տա-նայ նա-խան-
ձեալ ընդ նը-մա թոյլ-տու-ու-թեամբ-ըն
Աս-տու-ծոյ փոր-ձեաց ըզ-նա , եւ կո-րոյս
զա-մե-նայն ին-չըս Յով-բայ , մե-ռան ա-մե-
նայն զա-ւա-կունք նո-րա ՚ի տան մի-ում : Իսկ
ե-րա-նե-լին Յովբ լու-եալ զայն՝ եր-կիր ե-
պագ Տեա-ռըն եւ ա-սաց , մերկ ե-կի յաշ-
խարհ , եւ մերկ դար-ձայց անդ-րէն . Տէր
ետ , եւ Տէր է-առ . ե-ղի-ցի ա-նուն Տեա-
ռըն օրհ-նեալ : Եւ յե-տոյ սա-տա-նայ արկ
՚ի մար-մին նո-րա կե-ղըս , իսկ ե-րա-նե-լին
ան-սա-սան ե-կաց ընդ ա-մե-նայն վըր-դով-
մու-նըս եւ ան-ար-գեաց համբե-րու-թեամբ
ըզ-փոր-ձի-չըն աշ-խար-հի : Տե-սեալ Տեա-
ռըն զայս ա-մե-նայն , օրհ-նեաց ըզ-վեր-ջի-
նըն Յով-բայ ա-ռա-ւել-քան զա-ռա-ջին-սըն :

38. Քի-լո-պա-տոր թարգ-մա-նի հայ-րա-
սէր , որ էր մա-կա-նուն Պըտ-ղո-մեայ ար-քա-

յին Ե-գիպ-տա-ցւոց : Սա եւլ ՚ի պա-տե-րազմ
 ընդ-դէմ Ան-տի-ո-քայ թա-գա-ւո-րին , եւ
 ըս-պա-նաւ : իսկ Ան-տի-ո-քոս գը-նաց յԵ-րու-
 սա-ղէմ , եւ յոր-ժամ փա-ռա-սի-րու-թեամբ
 ցան-կայր մը-տա՞նել ՚ի տա-ճա-րըն՝ պա-տու-
 Տա-սե-ցաւ եւ փա-խեաւ : Մեծ Տա-լա-
 ծա-նըս ետ Հը-րէ-ից ՚ի ժա-մա-նա-կըս Մա-
 կա-բա-յեց-ւոց : Սա-կայն ըզ-կը-նի սուղինչ
 ժա-մա-նա-կաց ե-կըն յաշ-խարհ Փըր-կի-չըն
 տի-ե-ղե-րաց ըստ կան-խա-գու-շա-կու-թեան
 սուրբ մար-գա-րէ-ի-ցըն , ե-բարձ ըզ-կը-ռա-
 պաշ-տու-թիւն , եւ Տաս-տա-տեաց ըզ-Քը-
 ըիս-տո-նէ-ա-կան սուրբ եւ ուղ-ղա-փառ Տա-
 ւա-տըն :



ՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Մ Ա Ն Կ Ա Ն Ց :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՐԶՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆԻ ՕՐԻՆԱԿՆԵ

Մ . Իմաստութիւն :

Դիտնէսիոս բռնաւորն Սիկիլիոյ յաւուր միում ելեալ 'ի վաճառանոցն , ուր ամենայն վաճառականք վաճառէին զազգի ազգի մը թերս՝ պատահեցաւ փիլիսոփայի միոյ . եւ ետարց ցնա թէ դու զի՞նչ վաճառես : Պատասխանեաց թէ՛ ես իմաստութիւն վաճառեմ : Արկնեաց Դիտնէսիոս . ո՞րքան դնով վաճառես , ասաց փիլիսոփայն թէ՛ վեց հարիւր դահեկանի : Հանեալ զգրամն ետ նմա : Ասաց ցնա փիլիսոփայն . Ամենայն գործք խոհեմութեամբ գործէա , եւ մշտ վերջն հրաժէա . Ահա այս է իմ վաճառ : Այլ Դիտնէսիոս առ ոչ ինչ համարեցաւ զայն :

Բայց յաւուր միում իշխանք իւր թշնամա-

նալով կաշառս ետուն սափրչի (բալախի) նորա, զի ՚ի սափրել զՏերսն՝ հատցէ զգլուխ բռնաւորին: Երբ գնաց սափրիչն առ նա, Բիոնէսիոս առանց ո՛չ ինչ գիտելոյ բարձր ձայնիւ կոչեաց. Ամենայն գործոք խոհեմութեամբ գործեա, և մշտ վերջն հրաժեշտ: Սափրիչն կարծելով թէ Բիոնէսիոս իմացեալ է ըզխորհուրդս իշխանաց իւրոց՝ անկաւ յոտս նորին և խնդրեաց զթողութիւն, զի շրնորհեսցէ զկեանս իւր: Յայնժամ Բիոնէսիոս իմացաւ իմաստութեան գինն, թէ ինչպէս թանկագին է: Երանի՛ նմա, ասէ, որ ունի և գիտէ զյարգ իմաստութեան:

Է. Խրատեանութեան :

Աւաղակք ոմանք, որ սպասէին առ ճանապարհայն կողոպտել զանցաւորս, գլտին զկրօնաւոր ոք ՚ի կարգէ սրբոյն Փրճանկիսկոսի, և կարծելով թէ ունէր առ ինքեան ինչս՝ անկան ՚ի վերայ, և եգին զսուր իւրեանց ՚ի վերայ սրտի նորին, զի առ երկիւղի հանեալ տայցէ նոցա ըզփողան իւր: Իսկ բարի Արօնաւորն աներկիւղ և զուարթ գիմօք սկսաւ այսպէս

ասել ցնոսա , Պարոնայք , թուի ինձ զի
 'ի բազում ժամանակաց հետէ հեռացեալ
 կայք յաշխարհէ , և 'ի մարդկային կենցա-
 ղավարութենէ , որովհետև մոռացեալ էք
 զի Փռանկիսկոսեան կրօնաւորքն չկարեն
 պահել դրամս ընդ իւրեանս : Չունիմ դը-
 րամս տալ ձեզ , այլ փոխանակ նոցին
 տաց ձեզ զխրատ մի , որով կարասջիք
 յագեցուցանել զսիրտս ձեր ցանկասէրս :
 Աւազակքն ևս տեսանելով զուարթ և ըզ-
 հանդարտ բարբառ նորին , ունին մատուցին :

Ապա սկսաւ կրօնաւորն խրատել ըզ-
 նոսա այսպէս . եղբարք , տեսանեմ զի
 նմանիք դուք յոյժ Յիսուսի 'ի կենցաղա-
 վարութեան ձերում . վասն զի նա աղքատ
 մեռաւ , դուք ևս պարտիք աղքատ մեռա-
 նիլ : Նա ատելի եղև ամենեցուն , և հա-
 լածեցին զնա , դուք ևս ատելի էք ա-
 մենեցուն , եւ հալածիլ ունիք : Նա մտորե-
 ցուցիչ համարեցաւ , դուք ևս գող և աւա-
 ղակ էք : Նա չունէր զտեղի ինչ բնա-
 կութեան , դուք ևս չունիք զբնակարան
 ինչ ապահով , մութ է լոյս ձեր , գայլք են
 ընկերք ձեր , և թռչունք են երգեցիկք
 ձեր : Հալածեցին զնա միշտ 'ի քաղաքէ
 'ի քաղաք , դուք ևս 'ի միոյ վտանգէ ա-

զատիք և ՚ի միւսն անկանիք , և Տիգրան
 հողմոց , և տերեւք ծառոց դողացուցանեն
 զձեզ : Մասնեաց զնա մի յաշակերտաց
 նորա [Թշնամեաց իւրոց , դուք ևս պար-
 տիք մատնիլ ՚ի ձեռն միոյ յընկերաց ձե-
 րոց : Տարին զնա առաջի Պիղատոսի ՚ի դա-
 տաստան , դուք ևս պարտիք զնալ յաւուր
 միում առաջի անաչառ դատաւորի : Նա դա-
 տապարտեցաւ ՚ի մահ խաչի , դուք ևս պար-
 տիք կոխիլ զանարդ կախաղանէն : Նա էջ
 ՚ի դժոխս , դուք ևս պարտիք իջանիլ
 անդր : Սակայն երկու մեծ զանազանու-
 թիւն գոյ ՚ի մէջ ձեր և նորա , զի դատա-
 պարտեցին զնա սուտ վկայիւք , իսկ դուք
 դատապարտիլ ունիք արդար վկայիւք վա-
 սըն չարագործութեան ձերոյ : Նա ել ՚ի
 դժոխոց յաղթանակաւ , դուք պարտիք կալ
 անդր յաւիտեանս յաւիտենից :

Խրատս այնչափ շարժեաց զսիրտս ա-
 ւազակացն , մինչ զի անկան յոտս կրո-
 նաւորին զղջացան , և տարեալ զնա հա-
 սուցին ՚ի վանս իւր և հետեւեցան բարե-
 պաշտութեան ըստ բարի խրատոց սրբա-
 կաց կրօնաւորին :

Գ. Ազգասիրութիւն :

Խելացի մարդ ոք միշտ հողայր զունայնութենէ աշխարհի , և զարմանայր թէ ազահ մարդիկ զի՞արդ ոչ յազին , զի կարիցեն անդորրութեամբ անցուցանել ըզսակաւորեայ ժամանակս իւրեանց : Այնչափ շարժեցաւ սիրտ իւր ՚ի բարի խրատուց , մինչ զի զամենայն զոր ունէր բաժանեաց սողքատաց , և բնակէր սրբութեամբ ՚ի լէրինս զօրէն ճգնաւորի : Երբ ձմեռն ըսկաւ մերձենալ , ինքն որոնէր գտանել անդ զփապար ինչ վասն բնակութեան : Յաւուր միում եգիտ զտեղին ինչ և մըտեալ ՚ի ներքս՝ հայեցաւ ընդ այն , և ետես զկոտոր մի ոսկոյ , յորմէ այնքան երկեաւ , մինչ զի կարծէր թէ ետես ըզմահ իւր :

Ուստի թողեալ զոսկին փախեաւ անտի , և մինչ վազելով անցանէր ՚ի մէջ լէրինն , աւազակքն վազեալ ըմբռնեցին զնա , և հարցին ցնա զպատճառն : Պատասխանի ետ , թէ զմահ տեսի , վասն այն փախչիմ : Չարմացան յոյժ , և ստիպեցին ասել ինքեանց զուղիղ սլաւճառն : Յայն-

Ժամ իմացոյց նոցա թէ ոսկին է մաքս
 իմ. զոսկի տեսի ՚ի մէջ այրին՝ և իփախչիմ:

Աւազակքն խնդացին յոյժ յոյժ թողին
 զնա, և երեքին ևս գնացեալ գտին
 զոսկին, և սկսան ուրախ լինիլ: Իսկ
 յետոյ խորհուրդ արարեալ՝ ետուն զգրա-
 մըս ինչ ՚ի ձեռս միոյ յընկերաց իւրեանց գնալ
 ՚ի քաղաքն, և բերել ինքեանց զուտելիս և
 գինի: Գնացեալ սորա ՚ի քաղաքն՝ գնեաց
 զամենայն ինչ, և խորհեցաւ ՚ի միտս իւր
 յինքն գրաւել զոսկին զամենայն: Ուստի
 գնեալ զմահաբեր թոյն՝ խտունեաց ընդ
 գինւոյն. զի ընկերք իւր արբեալ զայն՝
 մեռցին: Յորժամ մերձեցաւ ողորմելի այրս
 այս առ նոսա՝ խորհեցան սպանանել ըզ-
 նա, և գտանել զոսկին: Այսու խորհու-
 րով ելին արտաքս, առին ՚ի ձեռաց
 նորին զամենայն ինչ, սպանին զնա, և ին-
 քեանք նստան յուտել և յըմպել, այլ որով-
 հետև գինին թունաւորեալ էր, նոքա ևս
 մեռան անդր:

Իսկ բարեսէր ճգնաւորին ոչ գտեալ իւր
 յարմար տեղի բնակութեան, խորհեցաւ ՚ի մի-
 տըս իւր, թէ աւազակքն տարեալ իցեն զոս-
 կին անտի և գնաց յայրն: Յորժամ մերձեցաւ,
 ետես, զի մին յաւազակացն սպանեալ

անկեալ կայր ՚ի գետին , միւս երկուքն ևս
 սեւացեալ դիմօք անկեալ կային , խմացաւ
 թէ ոսկին եբեր զայնպիսի մահ : Ուստի
 սկսաւ աւելի ևս փախչիլ և հեռանալ յայ-
 նրմ մահաբեր վայրէն , և անկեալ յերկիր
 գոհացաւ զԱստուծոյ՝ որ ազատեաց զինքն
 ՚ի չար մահուանէն , և ՚ի բոլոր կեանս
 իւր չկամէր տեսանել զոսկի . իբրև ճշմա-
 րիտ մահ համարելով զնոյն հոգւոյ և
 մարմնոյն իւրոյ :

Գ . Ժամատիրութիւն :

Կայր ՚ի քաղաքին Նաբօլայ իշխան ոմն բա-
 րեպաշտ և Ժամասէր , որ պարտ անձին հա-
 մարելով յամենայն կիւրակէի գնայր յեկեղե-
 ցին լսել զքարոզս , և երբ դառնայր եր-
 թայր ՚ի տուն իւր՝ կատարէր գործով զխրատ
 քարոզչին : Այս բարեպաշտ իշխանն գնէ
 զայլազգի գերի մի , և ուսուցեալ զլեզուն՝ պա-
 հէ առ իւր : Գերին երթայր յեկեղեցին
 յամենայն կիւրակէի , և իբրև տեսանէր զի
 տէր իւր զոր ինչ լսեր ՚ի քարոզչէն կատարէր
 գործով երթայ առ քարոզիչն և խնդրէ ՚ի
 նմանէ զի ՚ի հետեւեալ կիւրակէին քարոզեա-

ցէ ՚ի վերայ ազատութեան գերեաց : Քարողի-
 չըն լուեալ զինդիր գերոյն սիրով յանձն
 էառ կատարել : Յաւուր կիւրակէին գնացին
 յեկեղեցին լսել զքարողն , բայց քարողին
 քարողեաց ՚ի վերայ այլ իմն առարկայի : Իշխա
 նըն գնացեալ ՚ի տուն ՚ի լրումն անձ զխը-
 րատ քարողին այնորիկ : Գերին կարծելով թէ
 մոռացեալ իցէ քարողին , կրկին գնացեալ
 խնդրեաց : Քարողիչ ասաց թէ չեմ մոռացեալ ,
 այլ քարողեցից զոր խնդրեցերդ : Բայց ՚ի
 հետեւեալ կիւրակէին ևս չարար , և այսպէս
 անցին կիւրակէք ինչ : Աերջապէս գնացին ՚ի
 կիւրակէի միւս յեկեղեցին , քարողին ըստ
 խոստմանն իւրոյ քարողեաց ՚ի վերայ ազատու-
 թեան գերեաց , ընդ որ ուրախացեալ գերոյն
 գնաց ՚ի տուն ընդ տեառն իւրոյ , և իշ-
 խանին կոչեալ զնա տայ նմա զթուղթ ա-
 զատութեան , ասելով թէ դու ազատ ես յօրէ
 յայսմանէ , երբ հաճեսցիս գնալ ՚ի քաղաքն
 քոյ՝ գնան ազատ ես դու :

Գերին խնդացեալ գնայ առ քարողին
 վասն շնորհակալ լինելոյ , որ եղև պատճառ
 ազատութեան իւրոյ : Ապա եհարց ցնա , ըն-
 դէ՞ր չետուր քարողս զայս յառաջին կիւրա-
 կէի : Պատասխանեաց թէ զոր ինչ քարող զոր
 հանդերձեալ իցեմ տալ , նախ գործով կատա-

րեմ, ապա տամ : Որովհետև չէր իմ աղա-
տեալ զգերի ո.բ, առ այդ սպասեցի գնել
զոմն և աղատել, և ապա քարոզել այլոց,
վասն որոյ այսքան ժամանակ երկարե-
ցաւ :

Իսկ գերւոյն լուեալ զքանս զայս՝ այնչափ
զարմացաւ, մինչ զի դարձեալ անկաւ առ
ոսա իշխանին, խնդրեաց մնալ անդր,
և քրիստոնեայ եղև : Ահա այսպէս կա-
տարեցաւ փափակ գերւոյն, որ քարոզ չի և
իշխանի բարեպաշտութեանն հետևելով՝ ե-
րևելի բարեպաշտ եղև :

Է. Աճոյաշարժիւն :

Երևելի աստուածաբան ո.բ կամէր իմա-
նալ թէ ո՞վ իցի թշուառ և ողորմելի
յաշխարհի, և զկնի բազում մտածողու-
թեանց՝ խնդրեաց յԱստուծոյ ցուցանել իւ-
րեանն : Յաւուր միւսմ ՚ի ձմեռնային ժամանակի
գնացեալ յեկեղեցին՝ տեսանէ, զի խղճուկ
աղքատ ո.բ ցրտահարեալ գողայր առ գը-
րանն : Աստուածաբանն տեսանելով զաղ-
քաան ՚ի յեաին թշուառութեան, իմանայ
զնա լինիլ խնդրեալ թշուառն, զի բնաց

Կի ամանէ չէր թշուառագոյն : Աստի մերձ
 եկեալ ողջունէ զնա թշուառ անուանելով :
 Պատասխանէ աղքատն թէ չեմ ես թըշ-
 ուառ : Զարմանալով աստուածաբանն ասէ .
 ասցա ս'վ է թշուառ . որպիսի մարդ ես դու
 որ ոչ ճանաչես զանանկութիւն քո : Պա-
 տասխանէ աղքատն թէ թագաւոր եմ ես :
 Թագաւոր ես դու . կրկնեաց աստուածա-
 բանն . ս'ւր է տեղի թագաւորութեան քո .
 Պատասխանեաց նա՝ թէ թագաւորութիւն
 իմ է Կի մեջ հողւոյ իմոյ :

Աստուածաբանն աւելի զարմանալով ոչ
 ինչ եղիս հարցանելոյ , ասաց ցնա եթէ
 Աստուած վճռեցէ քեզ երթալ անդամ
 Կի դժոխս տակաւին չլինիս թշուառ : Ա-
 մենեւինն ոչ ասաց աղքատն , վասն զի
 ես միշտ օրինօք աստուածաբաշտութեան
 ընդիս կատրեալ ունիմ զԱրարիչ իմ , եթէ
 արժանի արասցէ զիս դժոխոց , զնա ևս
 տարայց ընդիս , յայնժամ դժոխքն ար-
 քայնութիւն լիցի ինձ , և ես հողւոյս թա-
 գաւորութիւնն դատանելով ոչ թէ թըշ-
 ուառ . յալ երջանիկ և երանելի լինիցիմ :
 Յայնժամ աստուածաբանն անկեալ առ
 սոս աղքատին ասաց . թէ իրաւ դու եր-
 ջանիկ և կատարեալ ես Աստուածաբաշտու-

Թեամբ, ուրեմն Աստուածս պաշտուծին
 չունեցող մարդն է Թշուառ Թէ յաշ-
 խարհի աստ՝ և Թէ ՚ի հանդերձեալն :

Պ. Հնազանդութիւն :

Ազնուական մեծատուն ոմն ունէր զա-
 ւակ մի, զոր և սիրէր յոյժ վասն հնա-
 զանդուծեանն, զի ընդդէմ հրամանի
 ծնողաց ոչ ինչ առնէր, Ուստի զարդացաւ
 ամենայն ուսմամբ, սակայն շատանալով սի-
 րով ծնողաց՝ ոչ կրթեցաւ ՚ի գործս
 տուրեառուծեան: Երբ աղայն տյն չա-
 փահասակ եղև, մայրն իւր խորհեցաւ ա-
 մուսնացուցանել զնա, իսկ հայրն խելացի
 դուով, Արջեաց զտղայն իւր՝ և ասաց, Թէ
 պարտիմ կատարել զինդ իր մօր քոյ, բայց
 զի երթեալ ոսկի մի արդիւնաւորեցես ինձ
 զի տեսից: գոյն երեսաց որդւոյն սկսաւ
 կարմրիլ, եւ առ ժամայն կատարել զհը-
 բաման հօր իւրոյ հնազանդուծեամբ, սա-
 կայն անսովոր գոլով վաստակոց՝ տամեալ
 իոկայր Մայրն ասաց ցնա, Թէ մի՛ արա-
 միր մեք շատ ոսկի ունիմք, ահա՛ ան քեզ
 զայս ոսկի և ՚ի վաղեան երեկոյի տուր հօր
 քոյ, սրով և վճարել ունիս զպարսոս
 հնազանդուծեան :

Տղայն հնազանդելով մօրն՝ էառ զոսկին
 և յերեկոյին՝ յորժամ հայր իւր նստեալ էր
 առ շատրուան աւազանին (քավառին) գնացեալ
 եկաց առաջի նորա: Հայրն եհարց թէ
 ուր է վաստակածդ ոսկին, տղայն հանեալ
 զոսկին առեալ ՚ի մօրէն՝ ետ նմա: Հայրն
 տեսանելով զայն՝ ձգեաց ՚ի ջուրն ասելով թէ
 սյս չէ՞ ոսկին վաստակոց քոց, գնան դու աշ-
 խատեան, և բեր: Տղայն ամօթահարեալ
 երթայ տրտմութեամբ և լայ: Մայրն տեսեալ
 զնա տրտմեալ հարցանէ թէ ընդէր լաս,
 թէպէտ հայր քո ծանեաւ զոսկին իւր, այլ
 ՚ի վաղիւ տալոց եմ քեզ զայլ ոսկի փոխ առեալ
 ի դրացեաց՝ զոր ոչ կարիցէ ճանաչել:
 Տղայն այսու սիրտ ստացաւ և ՚ի միւսում
 աւուր մայրն ետ նմա զոսկի մի փոխ
 առեալ ՚ի դրացեաց, և առաքեաց ըշ-
 նա առ հայր իւր: Իսկ հօրն առեալ զոս-
 կին ՚ի ձեռս իւր բարկանալով՝ էարկ ՚ի ջուր
 անդր, սյս չէ՞ քոյ վաստակածդ, ասաց,
 գնան բեր ինձ զոսկին վաստակոց քոց:

Յայնժամ տեսեալ սրտանւոյն զի մինչև
 չաշխատիցէ ինքնին ՚ի կատարել զհրաման
 հօր իւրոյ՝ չկարէ գտանել զցանկալին իւր,
 վաղայարոյց լեալ ընդ առաւօտն ելանէ ՚ի
 դրունս քաղաքին, և տեսանէ զշինուած

որ շինիւր անդէն : Փոխէ անդ զգգես-
տըս իւր , աշխատէ մինչ ցերեկոյն ընդ վաս-
տակողաց , յետոյ փոխեալ զգգեստս դառնայ
ի տուն . և այսպէս եօթնեակ մի չարաչար
աշխատելով դտանէ զոսկի մի . և տարեալ
դողալով տայ Տօր իւրում : Իսկ Տայնն
լստ առաջին օրինակին առեալ զոսկին ՚ի նը-
մանէ , այն ինչ մերձ էր արկանել ՚ի
Զուր՝ պատանին անկեալ յոտս նորա կաշու
խկոյն զձեռս Տօրն , և ասէ . մի՛ ընկենուր
Տայր , ափոսս է , զի եօթնեակ մի չարաչար
աշխատութեամբ և քրտամբ ք Տաղիւ թէ ար-
դիւնաւորեցի զայդ :

Առ որ ուրախանալով Տօրն սկսաւ խը-
րատել որդւոյն թէ հնազանդութիւն քոյ
արժանի արար քեզ վայելելոյ զմեծու-
թիւն իմ : Արովհետեւ փորձիւ գիտացեր ,
տէր լինելով ընչից , փութով կորուսանել չու-
նիս քտացուածս իմ : որպէս ո՛չ ցաւեցար
վասն ոսկոցն , զորս արկի ՚ի Զուր , ըստ որում
անփորձ էիր աշխատութեան , և ցաւեցար ընդ-
կորուստ վաստակով արդիւնաւորելոյդ : Այ-
սուհետեւ լսւ ծանիցես գիտել զյարգ ըս-
տացուածոց , և լինիլ տէր և թագաւոր աշ-
խարհի :

Է . Անշիշուարութեան :

Անուանի մեծատուն ոք ունէր զերիս որդիս ,
 զորս և ուսմամբ հրահանգեաց , որպէս փա-
 փաքէրն : Տեսանելով զառաքինի վարս և
 զկատարելութիւնս նոցին հանեալ զբոլոր
 ստացուածս իւր բաժանեաց նոցա : Բայց ունէր
 անդին մատանի մի որոյ ոչ գտանիւր նման ՚ի հա-
 մօրէն աշխարհի : Չոր պահեալ առ իւր՝ ասաց
 զաւակացն թէ ով ոք ՚ի ձէնջ առաքինի
 գործ ինչ կամ ճնաշխարհիկ իմն առաքինու-
 թիւն սեփականեացէ ինքեան՝ տաց նմա զայս :
 Որդիքն հրաման առեալ ՚ի հօրէն՝ առաջա-
 դրեցին շրջել յերիս ամիսս , և ապա դառնալ
 երևելի գործով ինչ : Յորժամ վերա-
 դարձան , կոչեաց զնոսա հայրն և եհարց
 թէ ո՞վ առաւել առաքինի գործ իցէ ա-
 րարեալ : Երեց որդին պատմեաց թէ , դէպ
 եղև ինձ օտարական մի , ընդ որում այն-
 քան մտերմացայ մինչ ետ ինձ պահել ըզ-
 մնուկ մի լի ոսկով առանց համարոյ ինչ
 կամ գրոյ , ուր ես կարող էի զբազում
 ինչ առնուլ անտի , բայց չկամեցայ ընդդէմ
 հաւատարմութեան մեղանչել : Պահեցի զայն
 բոլոր ամբողջ , և ետու նմա այնպէս :
 Կտասխանեաց հայրն բարի է գործդ ,
 հայց այսու առաքինութեամբ կատարեցեր

զբնական պարտիա քոյ, զի այլոց ոսկին գո-
ղանալով անիրաւ և զրկող լինէիր, որոյ հա-
տուցումն պարտ էր լինիլ թէ աստ և թէ
ի հանդերձելումն: Երկրորդ որդին պատմեաց
թէ մինչ շրջէի առ ավն ծովուն տեսի զի
տղայ մի անկաւ ՚ի ծով և մերձ էր հեղձուլ
առ ՚ի չժուժալ սրտիս անկայ ՚ի ծովն և հա-
նեալ զմանուկն տարեցուցի ՚ի վտանգէն: Պա-
տասխանեաց հայրն քոյդ գործ ևս բա-
րի է, բայց դու ևս կատարեցեր զբնական
պարտս, զի պարտական է ամենայն ոք օգ-
նել ընկերին, մանաւանդ վտանգերոց, զի
այր օղորմած օգնութիւն գտանի, և խստասիր-
տըն կործանի առանց օղորմութեան:

Իսկ երրորդ որդին պատմեաց թէ անի-
րաւ այր ոք առ նախանձու այնքան թըշ-
նամբ եղև ինձ, մինչ ինդրէր սպանանել զիս:
Ես մեծաւ զգուշութեամբ հեռի մնայի
ի նմանէ: Յաւուր միում տեսի, զի ննջէր ՚ի
ծայր լեւին միոյ, որ էր այնքան վտան-
գաւոր, մինչ եթէ շարժիւր ՚ի քուն իւր՝ գը-
լորեալ հոսիւր ՚ի վայր և մահանայր: Յայե-
ցեալ ՚ի նա սիրտ իմ առաւել չկարաց ժու-
ժալ, ցանկացայ փրկել զնա ՚ի վտանգէ անտի
թէպէտ և ինձ մեծ թշնամբ լեալ էր նորայ:
Ուստի յառաջ մատուցեալ զգուշութեամբ
զարթուցի զնա ՚ի քնոյ և փրկեցի ՚ի վտան-

գէն : Հայրն լուեալ զայս կոչեաց և ընդ-
 գրկեաց զանյիշատար որդին իւր՝ ասելով սիրելի
 զուակ իմ . քեզ վայելէ այս անդին
 մատանիս . զի առաքինութիւն քոյ արժանի է
 ամենայն բարեաց . որովհետև բարի առնել
 բարերարին է գործ բնական . բայց բարի
 առնել չարարարին է գործ գերբնական ,
 դերձեցիկ առաքինութիւն և գիցազնական
 բարեգործութիւն : Ահա այսպիսի մեծ
 գովութեամբ և սիրով հանեալ զմատանին
 ազոյց ՚ի մատ անիշատար զուակին , և հայ-
 րական օրհնութեամբ պսակեաց զնա :

Աղօթք Տէրոնական :

Հայր մեր որ յերկինն ըս , սուրբ եղիցի
 ահուն քո , եկեսցէ արքայութիւն քո ,
 եղիցին կամք քո՝ որ-պէս յերկինս , եւ յերկ-
 րի : զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այ-
 սօր , թող մեզ ըզ-պարտիւն մեր , որ-պէս եւ
 մեք թողմք մերոց պարտապանաց , եւ մի՛
 տանիր ըզ-մեզ ՚ի փորձութիւն , այլ փրկեան
 ըզ-մեզ ՚ի չարէն . զի քո է արքայութիւն , եւ
 զօրութիւն , եւ փառք յաւիտեանս , ամէն :

Աղօթք Աստուծոյն :

Քո-հանամ ըզ-քէն Տէր , որ ստեղծեր
 զիս եւ պիտոյս իմ հոգաս եւ խնամես զիս :

Գո-հա-նամ ըզ-քէն որ ետուր զան-ցեալ գի-
 շե-րըն խա-ղա-ղու-թեամբ ան-ցու-ցա-նել .
 ա-ղա-չեմ ըզ-քեզ միշտ օրհ-նել եւ պահ-պա-
 նել զիս եւ ըզ-սի-րե-լի ~~ըն-տե-սե-նի-ս~~ եւ ~~ըն-
 ք-ա-րե-կ-ա-մե-ն~~ իմ ան-փորձ եւ
 ան վը-նաս ՚ի չարեաց . ա-մէն :

Աղօթ նախան պճազն :

Օրհ-նեա՛ Տէր ըզ-կե-րա-կու-րըս զայս , զոր
 պար-գե-ւե-ցեր մեզ ՚ի լի-ու-թիւն . ա-մէն :

Աղօթ պէնի ճաշուն :

Գո-հա-նամք ըզ-քէն Տէր բո-լո-րով սըր-
 տիւ վա-սըն սը-նըն-դա-րար կե-րակ-րոյն , ո-
 րով կե-րակ-րե-ցեր ըզ-մեզ ա-ռատ ո-ղոր-մու-
 թեամբ քով , ա-մէն :

Աղօթ Երեկոյեան :

Ա-մե-նա-կա-րո՛ղ եւ ո-ղոր-մած Աստ-ուած
 թո՛ղ ինձ մա-տու-ցա-նել քեզ շը-նոր-հա-կա
 լու-թիւ-նըս վա-սըն բա-ղում պար-գե-ւա-ցըն
 քոց զոր ՚ի քէն ըս-տա-ցայ : Ըն-կա՛լ ըզ-խո-
 նարհ ա-ղա-չա-նըս իմ եւ նե-րեա՛ն զա-մե-նայն
 մե-ղըս զոր այ-սօր գոր-ծե-ցի : Օրհ-նեա՛ն զիս
 եւ ըզ-սի-րե-լի ~~ըն-տե-սե-նի-ս~~ եւ
~~ըզ-ք-ա-րե-կ-ա-մե-ն~~ իմ եւ պա-հիւ-ն
 ըզ-նո-սա միշտ ան-սա-սան , ա-մէն :

Handwritten notes at the bottom of the page, partially obscured by a purple stamp.

